ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-20/01» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2020 թվականի հուլիսի 21-ին կնքված N ԴԴ-ԳՀԱՇՁԲ-20/01 պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) 2020 թվականի սեպտեմբերի 03-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունները պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝
Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետի երկարաձգում:

Փոփոխության նկարագրություն՝

1. Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը երկարաձգվել է 30 օրացուցային օրով, ինչով պայմանավորված՝ Պայմանագրի <<ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ՝ ՇԵՆՔԵՐԻ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ>> վերտառությամբ Հավելված N 2-ում <<Աշխատանքների կատարման ժամկետը>>՝ <<Ավարտը>> սյունակում <<45 օրացուցային օրվա ընթացքում>> բառերը փոխարինվել են <<75 օրացուցային օրվա ընթացքում>> բառերով:

Փոփոխության հիմնավորում՝
Պայմանագրի 8.5 և 8.6 կետեր:

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ**

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

21.07.2020 Թ. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-20/01» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան « 03 » սեպտեմբերի 2020թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ռ. Ասատրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները, և հիմք ընդունելով 21.07.2020թ. կնքված N «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-20/01» կապալային աշխատանքների կատարման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.6 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ, կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը որոշեցին Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով, ինչով պայմանավորված՝

1.1 Պայմանագրի 1.3 կետում նշված <<45 օրացուցային օրը>> բառերը փոխարինել «75 օրացուցային օրը» բառերով:

1.2 <<ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ՝ ՇԵՆՔԵՐԻ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ>> վերտառությամբ Հավելված N 2-ում <<Աշխատանքների կատարման ժամկետը>>՝ <<Ավարտը>> սյունակում <<45 օրացուցային օրվա ընթացքում>> բառերը փոխարինել <<75 օրացուցային օրվա ընթացքում>> բառերով:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Դատական դեպարտամենտ

Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1,17

ՀՎՀՀ՝ 02583241

Հ/Հ՝ 900011192151

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավար՝ Կ. Փոլադյան

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ

Հասցե՝ ք.Ճամբ[illegible] փ., 2.

[illegible]

[illegible] 08622542

Հ/Հ՝ 160[illegible]

«ՎՏԲ Հայաստան Բանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Ռ. Ասատրյան

/ստորագրություն/

Կ.Տ